ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. **Գործառույթներ.**

Ավագ հարկադիր կատարողը՝

1) Իրականացնում է կատարողական վարույթի շրջանակներում կատարողական թերթի պարզաբանման անհրաժեշտություն առաջանալու դեպքում կատարողական թերթի պարզաբանման դիմումը կազմելու գործընթացը,

2) իրականացնում է հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ եզրակացության տրամադրման գործընթացը,

3) իրականացնում է կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի, պահանջատիրոջ գործողություններին քրեաիրավական գնահատական տալու առնչությամբ հաղորդումների նախապատրաստումը և հետագա ընթացքը,

4) Իրականացնում է պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում կատարողական ծախսերի բռնագանձման ապահովման նպատակով սնանկության վարույթում ներկայացուցչության ապահովում և սնանկության վարույթի շրջանակներում կատարողական ծախսերի բռնագանձման գործընթացի համակարգում,

5) ըստ հանձնարարության, կնքում է հարկադիր աճուրդով կամ ուղղակի վաճառքով իրացված գույքի առուվաճառքի պայմանագիրը,

6) իրականացնում է ըստ անհրաժեշտության և հանձնարարության՝ կատարողական վարույթին վերաբերվող հարցերով գլխավոր հարկադիր կատարողին կամ Ծառայությանն ուղղված վարչական բողոքների, ինչպես նաև այլ դիմումների համապատասխան ընթացքի ապահովումը՝ այդ թվում հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումների վերադասության կարգով վերանայման (վերացման) որոշումների կայացում,

7) իրականացնում է գլխավոր հարկադիր կատարողի կողմից այլ պետական մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց ուղղված գրությունների նախապատրաստումը,

8) իրականացնում է գլխավոր հարկադիր կատարողի հանձնարարությամբ՝ բաժնի իրավասությանը վերաբերող բողոքների, դիմումների ընթացքի ապահովումը՝ այդ թվում վերադասության կարգով վերանայման որոշումների նախագծերի նախապատրաստումը:

2. **Պաշտոնին ներկայացվող պահանջը.**

Հարկադիր կատարման ծառայության ավագ հարկադիր կատարող կարող է նշանակվել այն անձը, որն զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի կամ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի կամ հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն մեկ տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երկու տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: